



Վ Ճ Ի Ռ

Հանուն Հայաստանի Հանրապետության

30 հունիսի 2014թ.

ք. Գյումրի

վարչական գործ թիվ ՎՂ5/0032/05/14
Հայաստանի Հանրապետության Վարչական դատարանը
նախագահությամբ՝ դատավոր Էդ.Նահապետյանի

Մասնակցությամբ՝ հայցվոր՝

Սահականուշ Սուրիկի Աբրահամյան
անձնագիր AE 0489146, տրված
22.02.2000 թվականին, 016-ի կողմից,
երկարաձգված է մինչև 22.02.2015
թվականը
ներկայացուցիչ՝ Հ.Մելքոնյան

պատասխանող՝

Շիրակի մարզպետարան
ներկայացուցիչներ՝
Գ.Բաղդասարյան
Վ.Եփրեմյան

երրորդ անձինք՝

Սմբատ Մարտունիկի, Մանիկ
Ֆրունզեյի, Մարինե և Նարինե
Սմբատի Ալեքսանյաններ

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի Սահականուշ Սուրիկի Աբրահամյանի ընդդեմ Շիրակի մարզպետարանի, երրորդ անձինք՝ Սմբատ Մարտունիկի, Մանիկ Ֆրունզեյի, Մարինե և Նարինե Սմբատի Ալեքսանյանների՝ Շիրակի մարզպետի որոշումն առ ոչինչ ճանաչելու պահանջի մասին

Պ Ա Ր Չ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

Սահականուշ Սուրիկի Աբրահամյանը Հայաստանի Հանրապետության Վարչական դատարանի Գյումրու նստավայր 04.03.2014 թվականին հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Շիրակի մարզպետարանի՝ Շիրակի մարզպետի որոշումն առ ոչինչ ճանաչելու պահանջի մասին:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 07.03.2014 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և բավարարվել է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը:

Հրավիրվել է նախնական դատական նիստ:

16.04.2014 թվականին դատարանը որոշում է կայացրել երրորդ անձ ներգրավելու մասին:

06.05.2014 թվականի որոշմամբ սույն վարչական գործը նշանակվել է դատաքննության:

30.06.2014 թվականը հայտարարվել է գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման օր:

Հայցվորի փաստարկները, հիմնավորումները և պահանջը.

Հայցադիմումով հայցվորը հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի „Աղետի գոտու վերականգնման համալիր օժազրի



շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված պետական բնակարանային ֆոնդի Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պայմանագիր կնքելու մասին՝ թիվ 70-Ա որոշման հիման վրա Շիրակի մարզպետարանի և քաղաքացիներ՝ Սմբատ, Մանիկ, Նարինե, Մարինե Ալեքսանյանների միջև կնքվել է պետական աջակցություն ցուցաբերելու մասին պայմանագիր և համաձայն այդ պայմանագրի նշված անձանց սեփականության իրավունքով տրամադրվել է Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանը: 03.09.1991 թվականին ծնված Մարինե Ալեքսանյանը ըստ անձնագրի /AM 0616659, տրված 27.01.2012 թվականին 016-ի կողմից/ „Նշումներ” բաժնի 27.01.2012 թվականից փաստացի բնակվում է Գյումրի, Ղոբդանյան 5 նրբանցք, թիվ 9 տանը /անձնագրի պատճենը կցվում է/: Վարչական դատարանում թիվ ՎԴ5/0411/05/13 վարչական գործի դատաքննության նախապատրաստման փուլում՝ Շիրակի մարզպետի տեղակալը իր 23.10.2013 թվականի թիվ 022/11/5067-13 գրությամբ վարչական դատարանին հայտնել է, որ Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի թիվ 70-Ա որոշման նախագիծը Շիրակի մարզպետարանում չի պահպանվել, այն դեպքում, որ Շիրակի մարզպետի 2010 թվականի մայիսի 14-ի թիվ 100-Ն որոշմամբ հաստատված Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գործավարության կարգի 86-րդ կետի՝ համակարգում ներառված ցանկացած փաստաթղթի գործողության ընթացքն ավարտվելուց հետո տվյալ փաստաթուղթը պահպանվում արխիվացվում է համակարգում՝ 3 տարի ժամկետով: Նշվածով պարզ դարձավ, որ Շիրակի մարզպետարանը ակնառու կոպիտ սխալի արդյունքում ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք է տրամադրել Շիրակի մարզպետի 06.04.2012 թվականի թիվ 70-Ա որոշմամբ: Համաձայն „Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին” ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի „դ,” կետի՝

1. Առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք: Համաձայն „Վարչական դատավարության օրենսգրքի” 69-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել վարչական ակտի առ ոչինչ լինելը:

Վարչապետի 30.03.2012 թվականի թիվ 272-Ա որոշմամբ Շիրակի մարզպետ Ա. Գիզիրյանին 20.04.2012-06.05.2012 թվականներին տրամադրվել է նպատակային արձակուրդ և վերջինիս պարտականությունները դրվել են Շիրակի մարզպետի տեղակալի վրա, սակայն Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի թիվ 70-Ա որոշման վերջում նշված է Ա.Գիզիրյան, այսինքն որոշումը ստորագրվել է արձակուրդում գտնվող Ա. Գիզիրյանի կողմից:

Հաշվի առնելով, որ առկա է Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի թիվ 70-Ա որոշումը անվավեր ճանաչելը մերժելու վերաբերյալ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 06.02.2013 թվականի (թիվ ՎԴ5/0172/05/12 վարչական գործ) օրինական ուժի մեջ մտած որոշում, սակայն Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի թիվ 70-Ա որոշման հիմքերը ոչ իրավաչափ լինելու պատճառով Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի թիվ 70-Ա որոշմամբ Սմբատ, Մանիկ, Նարինե, Մարինե Ալեքսանյաններին ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք է տրամադրվել, ուստի հայցվորը խնդրել է դատարանին Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի թիվ 70-Ա որոշումը ճանաչել առ ոչինչ:

Ի լրումն հայցադիմումի

Ի լրումն (Շիրակի մարզպետի որոշումը առ ոչինչ ճանաչելու մասին) հայցադիմումի, դատարանին է ներկայացվում նաև վարչական ակտը և վերջինիս հիմքը (70-Ա որոշում և



որոշման նախագիծ) հանդիսանում է առ ոչինչ նաև այն հիմքով, որ ստորագրվել է ոչ թե այն ստորագրելու լիազորություն ունեցող անձի կողմից, այլ ուրիշ անձի կողմից, ով նման լիազորություն չի ունեցել: Բացի այդ իրենց կեղմից ձեռք բերված 70Ա որոշման նախագծի պատճենի մեջ առկա է հատուկ կարծիք, ըստ որի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Գ.Բաղդասարյանի կողմից ներկայացված են Ալեքսանյանների բնակարանային գործում փաստաթղթերի թերի լինելու հանգամանքները, որոնց պարագայում որոշում կայացնելը ցուցված չէ, իսկ եթե որպես փաստ հաշվի էք առնվում ՇՄ մարզպետի տեղակալի 23.10.2013 թվականի 022/11/5067-13 գրությունը ուղղված ՀՀ ՎԴ դատավոր Էդ.Նահապետյանին, որտեղ տեղակալը հայտնում է թե նախագիծը մարզպետարանում չի պահպանվել, առավել ևս հաստատվում է 70Ա որոշման առ ոչինչ լինելը, քանի որ որոշման նախագիծը միակ և անատարկելի հիմք է հանդիսանում ցանկացած որոշում կայացնելու համար:

Բացի այդ, քանի որ ի կատարումն հայցի առարկա հանդիսացող վարչական ակտի՝ 2012 թվականի մայիսի 11-ին կնքվել է պետական աջակցություն ցուցաբերելու մասին պայմանագիր, ուստի առաջնորդվելով ՀՀ Վարչական Դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով, հայցը համալրում ենք հետևյալ ածանցյալ պահանջով, առ ոչինչ ճանաչել ՀՀ-ի և Ալեքսանյանների ընտանիքի միջև 21.05.2012 թվականին կնքած պետական աջակցություն ցուցաբերելու մասին պայմանագիրը և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Գյումրու տարածքային բաժնի կողմից Սմբատ, Մանիկ, Մարինե, Նարինե Ալեքսանյաններին 16.05.2012 թվականին տրված Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանի համար թիվ 16052012-08-0111 սեփականության իրավունքի վկայականը: Նշվում է նաև, որ փորձել է առ ոչինչ վարչական ակտը վիճարկել նաև վարչական կարգով, մասնավորապես առաջնորդվելով վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 4-րդ մասով, դիմել է ՀՀ Շիրակի մարզպետին, սակայն իրեն պատասխանել են, որ սույն դատական գործի վարույթը արգելք է հանդիսանում իրենց կողմից վարչական ակտը առ ոչինչ ճանաչելու համար:

Հայցի հիմնավորվածությունը ապացուցվում է նաև այն հանգամանքով, որ Ալեքսանյանների ընտանիքը անօթևան չի հանդիսանում (հիմք՝ ՀՀ Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի թիվ 1/2-011/86 29.07.2013թ. գրությունը):

Հիմք ընդունելով վերոգրյալը խնդրվում է.

1. ՀՀ ՇՄ մարզպետի 06.04.2012 թվականի թիվ 70Ա որոշումը ճանաչել առ ոչինչ:

2. Որպես հետևանք անվավեր ճանաչել 2012 թվականի մայիսի 11-ի պետական աջակցություն ցուցաբերելու մասին կնքված պայմանագիրը և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Գյումրու տարածքային բաժնի կողմից Սմբատ, Մանիկ, Մարինե, Նարինե Ալեքսանյաններին 16.05.2012 թվականին տրված Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանի համար թիվ. 16052012-08-0111 սեփականության իրավունքի վկայականին վերաբերող գրանցամատյանում կատարված համապատասխան գրառումը:

Պատասխանողի փաստարկները, հիմնավորումները և պահանջը

ՀՀ Շիրակի մարզպետարանը հայցադիմումին գրավոր պատասխան է ներկայացրել և հայտնել, որ հայցն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 22-ի „Աղետի գոտում երկրաշարժի հետևանքով վթարային դարձած և պետական միջոցների հաշվին ամրացված շենքերի բնակարանների բնակեցման մասին” թիվ 116 որոշման 2-րդ կետի ամրացված պետական և հանրային բնակելի ֆոնդի շենքերի բնակարանները հատկացվում են այդ բնակավայրում մշտապես բնակվող անվաղ շենքի նախկին վարձակալներին: Իսկ համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1935-Ն որոշման 1-ին կետի „բ., երթակների աղետի գոտում



վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանները քաղաքացիներին հատկացվում են անհատույց, սեփականության իրավունքով համապատասխան մարզպետի և քաղաքացու միջև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված՝ պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ համապատասխան պայմանագրի հիման վրա: Համաձայն Գյումրու քաղաքապետարանի բնակարանային հաշվառման և բաշխման բաժնի պետի 2012 թվականի փետրվարի 6-ի տեղեկանքի՝ Գյումրի քաղաքի Կամո 40ա շենքի թիվ 2 մեկ սենյականոց բնակարանն այլ անձի չի հատկացվել:

Համաձայն „Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պետական սեփականություն համարվող բնակարանային ֆոնդի բնակարանների մասնավորեցումը կատարվում է տվյալ բնակարանի վարձակալի կողմից համապատասխան մարզպետին (Երեան քաղաքում՝ քաղաքապետին) ուղղված դիմումի հիման վրա՝ այդ բնակարանում բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող չափահաս անձանց գրավոր համաձայնության առկայության դեպքում: Համաձայն նույն օրենքի 5-րդ հոդվածի՝ պետական բնակարանային ֆոնդի բնակարանները մասնավորեցվում են տվյալ բնակարանի օգտագործման իրավունք ունեցող անձանց անունով՝ որպես նրանց ընդհանուր համատեղ սեփականություն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի „Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված պետական բնակարանային ֆոնդի Գյումրի քաղաքի Կամո 40ա շենքի թիվ 2 բնակարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պայմանագիր կնքելու մասին” թիվ 70-Ա որոշումը բխում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներից և նշված որոշման հասցեատիրոջ վրա չի դրվել ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն կամ իրավունք:

Ավելին, ՀՀ Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի թիվ 70-Ա որոշման կապակցությամբ առկա է թիվ ՎԴ5/0172/05/12 վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2013 թվականի փետրվարի 6-ի օրինական ուժի մեջ մտած որոշումը, համաձայն որի Սահականուշ Աբրահամյանի հայցը ՀՀ Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի „Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված պետական բնակարանային ֆոնդի Գյումրի քաղաքի Կամո 40ա շենքի թիվ 2 բնակարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պայմանագիր կնքելու մասին” թիվ 70-Ա վարչական ակտն ամբողջությամբ անվավեր ճանաչելու և վերացնելու, և որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջ՝ Հայաստանի Հանրապետության և Մմբատ Մարտունիկի, Մանիկ Ֆրունզեյի, Մարինե Մմբատի, Նարինե Մմբատի Ալեքսանյանների միջև 2012 թվականի մայիսի 11-ի „Պետական աջակցություն ցուցաբերելու մասին” պայմանագիրը անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժվել է: Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի նախկինում քննված քաղաքացիական կամ վարչական գործով դատարանի օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատված փաստերը միևնույն կողմերի մասնակցությամբ սույն օրենսգրքով նախատեսված որևէ գործ քննարկվելու վերաբերյալ ապացուցման կարիք չունեն:

Վերոգրյալից ելնելով, գտնում են, որ „Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի է ին մասի „դ,,



կետի հատկանիշները բացակայում են ՀՀ Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի թիվ 70-Ա որոշման մեջ, ուստի խնդրվում է Մահականուշ Աբրահամյանի հայցը մերժել:

Երրորդ անձի իրավական դիրքորոշումը.

Երրորդ անձինք հայցադիմումին գրավոր պատասխան չեն ներկայացրել և որևէ իրավական դիրքորոշում չեն արտահայտել: Դատաքաննության ընթացքում հայցի դեմ առարկելով հայտնեցին որ նշված բնակարանում բնակվել են տարիներ շարունակ հետագայում Հանրապետությունից բացակայելու պատճառով ինչպես նաև շենքը ամրացնելու պատճառով չեն բնակվել, գտնելով որ ներկայացված հայցը անհիմն է խնդրեցին հայցը մերժել:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը և Վարչական դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Լսելով կողմերի բացատրությունները, հետազոտելով գործում առկա գրավոր ապացույցները դատարանը եզրակացրեց, որ հայցն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

„Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին” ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

ա) ակտից հստակ չի երևում կամ միանշանակ պարզ չէ, թե որ վարչական մարմինն է դա ընդունել.

բ) ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական արմինը.

գ) ակտից պարզ չէ, թե դա որոշակիորեն ում է հասցեագրված, կամ հայտնի չէ, թե ինչ հարց է կարգավորում.

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝ ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն,

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, սահմանում են անձի դատարան դիմելու հատկապես կարևորագույն իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար, որը վերաբերում է նաև պետական մարմինների կողմից իրականացվող վարչարարության արդյունքում ընդունված վարչական ակտերին գործողություններին (անգործությամբ) դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը ևս դեպքում



պետական մարմինը կայացնում է վարչական ակտ, կատարում է գործողություն կամ թույլ է տալիս անգործություն, որի գոյությունը անձի համար ստեղծում է պայմաններ՝ ողջամտորեն համարելու, որ պետական մարմնի որոշակի վարչական ակտով խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Վերոգրյալից հետևում է, որ դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգման ապահովմանը: Այսինքն՝ անձը, դիմելով վարչական դատարան, ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական մարմինների վարչական ակտերը, գործողությունները (անգործությունը) ընդունվել կամ կատարվել են օրենքի խախտմամբ, այլև պետք է մատնանշի իր այն իրավունքները, որոնք դրա արդյունքում խախտվել են: Այստեղից էլ հետևում է, որ վարչական ակտը դատական կարգով կարող է ճանաչվել անվավեր, եթե հաստատվի հետևյալ երկու վավերապայմանների միաժամանակյա առկայությունը.

1. վիճարկվող վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

2. վիճարկվող վարչական ակտով խախտվել են հայցվորի՝ Սահականուշ Սուրիկի Աբրահամյանի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Սույն գործի փաստերի համաձայն ՀՀ Շիրակի մարզպետարանը հիմք ընդունելով այն փաստը, որ Գյումրու քաղաքի Կամո փողոցի 40ա շենքը հանդիսանում է պետական սեփականություն, ղեկավարվելով „Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի „Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանների բաշխման և 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին” թիվ 1935-Ն որոշման 1-ին կետի „բ” ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 22-ի „Աղետի գոտու երկրաշարժի հետևանքով վթարային դարձած և պետական միջոցների հաշվին ամրացված շենքերի բնակարանների բնակեցման մասին” թիվ 116 որոշման 2-րդ կետի դրույթներով 2012 թվականի ապրիլի 6-ի թիվ 70-Ա որոշմամբ, „Աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված Գյումրի քաղաքի Կամո 40ա շենքի թիվ 2 մեկ սենյականոց բնակարանն անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ներքոհիշյալ քաղաքացիների հետ՝ Ալեքսանյան Սմբատ Մարտունիկի, Ալեքսանյան Մանիկ Ֆրուզեի, Ալեքսանյան Մարինե Սմբատի, Ալեքսանյան Նարինե Սմբատի”: Սույն գործի ապացույցների հետազոտմամբ դատարանը պարզեց նաև, որ ՀՀ Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի թիվ 70-Ա որոշման կապակցությամբ, սույն գործով հայցվորի կողմից թիվ ՎԴ5/0172/05/12 վարչական գործով վիճարկվել է նշված որոշման իրավաչափությունը անվավեր ճանաչելու պահանջով, Վարչական դատարանի վճռով հայցը բավարարվել է, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2013 թվականի փետրվարի 6-ի օրենսդրական ուժի մեջ մտած որոշման համաձայն՝ Սահականուշ Աբրահամյանի հայցը Վարչական դատարանի 2012 թվականի ապրիլի 6-ի „Աղետի գոտու վերականգնման ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված պետական



բնակարանային ֆոնդի Գյումրի քաղաքի Կամո 40ա շենքի թիվ 2 բնակարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պայմանագիր կնքելու մասին” թիվ 70-Ա վարչական ակտն ամբողջությամբ անվավեր ճանաչելու և վերացնելու, և որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջ՝ Հայաստանի Հանրապետության և Սմբատ Մարտունիկի, Մանիկ Ֆրունզեյի, Մարինե Սմբատի, Նարինե Սմբատի Ալեքսանյանների միջև 2012 թվականի մայիսի 11-ի „Պետական աջակցություն ցուցաբերելու մասին” պայմանագիրը անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժվել է: Դատարանի գնահատմամբ համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի՝ նախկինում քննված քաղաքացիական կամ վարչական գործով դատարանի օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատված փաստերը միևնույն կողմերի մասնակցությամբ սույն օրենսգրքով նախատեսված որևէ գործ քննելիս վերստին ապացուցման կարիք չունեն: Դատարանը գտնում է, որ սույն գործով հայցվորի կողմից վիճարկվող ակտի առ ոչինչ ճանաչելու իրավական և փաստական հանգամանքները բացակայում են, որպեսզի պատճառաբանությամբ էլ դատարանը գտնում է, որ հայցն ենթակա է մերժման: Սույն գործով պատասխանող ՀՀ ՇՄ հիմք ընդունելով „Աղետի գոտում երկրաշարժի հետևանքով վթարային դարձած և պետական միջոցների հաշվին ամրացված շենքերի բնակարանների բնակեցման մասին” թիվ 116 որոշման 2-րդ կետով սահմանված՝ ամրացված պետական և հանրային բնակելի ֆոնդի շենքերի բնակարանները հատկացվում են այդ բնակավայրում մշտապես բնակվող տվյալ շենքի նախկին վարձակալներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1935-Ն որոշման 1-ին կետի „բ.” ենթակետի՝ աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանները քաղաքացիներին հատկացվում են անհատույց, սեփականության իրավունքով՝ համապատասխան մարզպետի և քաղաքացու միջև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված՝ պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ համապատասխան պայմանագրի հիման վրա ընդունել է իրավաչափ որոշում, քանի որ համաձայն Գյումրու քաղաքապետարանի բնակարանային հաշվառման և բաշխման բաժնի պետի 2012 թվականի փետրվարի 6-ի տեղեկանքի՝ Գյումրի քաղաքի Կամո 40ա շենքի թիվ 2 մեկ սենյականոց բնակարանն այլ անձի չի հատկացվել: Համաձայն „Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պետական սեփականություն համարվող բնակարանային ֆոնդի բնակարանների մասնավորեցումը կատարվում է տվյալ բնակարանի վարձակալի կողմից համապատասխան մարզպետին (Երևան քաղաքում՝ քաղաքապետին) ուղղված դիմումի հիման վրա՝ այդ բնակարանում բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող չափահաս անձանց գրավոր համաձայնության առկայության դեպքում: Համաձայն նույն օրենքի 5-րդ հոդվածի՝ պետական բնակարանային ֆոնդի բնակարանները մասնավորեցվում են տվյալ բնակարանի օգտագործման իրավունք ունեցող անձանց անունով՝ որպես նրանց ընդհանուր համատեղ սեփականություն: Դատարանը սույն գործով ձեռք բերված ապացույցների գնահատմամբ գտնում է որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 6-ի „Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված պետական բնակարանային ֆոնդի Գյումրի քաղաքի Կամո 40ա շենքի թիվ 2 բնակարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պայմանագիր կնքելու մասին”



թիվ 70-Ա որոշումը բխում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներից և նշված որոշմամբ ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն կամ իրավունք չի դրվել որևէ մեկի նկատմամբ:

Ներկայացված հիմնական հայցապահանջի հետ մեկտեղ հայցվորի կողմից դատարան է ներկայացվել նաև ածանցյալ պահանջ, այն է՝ որպես հետևանք անվավեր ճանաչել 2012 թվականի մայիսի 11-ի պետական աջակցություն ցուցաբերելու մասին կնքված պայմանագիրը և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Գյումրու տարածքային բաժնի կողմից Սմբատ, Մանիկ, Մարինե, Նարինե Ալեքսանյաններին 16.05.2012 թվականին տրված Գյումրի քաղաքի Կամո փողոցի 40ա շենքի թիվ 2 բնակարանի համար թիվ. 16052012-08-0111 սեփականության իրավունքի վկայականին վերաբերող գրանցամատյանում կատարված համապատասխան գրառումը: Տվյալ դեպքում հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ներկայացված հիմնական հայցապահանջը ենթակա է մերժման, դատարանը գտնում է, որ ներկայացված հետևանքների մասով հայցը նույնպես ենթակա է մերժման:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ կրում է մյուս կողմի դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Տվյալ դեպքում, հայցվորը վճարել է պետական տուրքի գումարը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցը բավարարվել է, հետևաբար դատական ծախսի՝ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածներով, ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Յ

1. Սահականուշ Սուրիկի Աբրահամյանի հայցն ընդդեմ Շիրակի մարզպետարանի, երրորդ անձինք՝ Սմբատ Մարտունիկի, Մանիկ Ֆրունզեյի, Մարինե և Նարինե Սմբատի Ալեքսանյանների՝ Շիրակի մարզպետի որոշումն առ ոչինչ ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարան:

4. Օրինական ուժի մեջ մտնելուց հետո վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ԴԱՀԿ ծառայության միջոցով պարտավորվածի հաշվին:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝

Է. Դ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ
Վճարվել չաբարակել
ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝

2015 թվականին 7 Պ

Է. Դ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ